ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

հոնորարի վերաբերյալ

««Հավասար հնարավորություններ» ուսանողական քաղաքացիական նախաձեռնություն» երիտասարդական ՀԿ-ն մի կողմից (այսուհետ՝ Կազմակերպություն), _____

_____

Շահառուի (քաղաքացու) անուն, ազգանուն, անձնագիր, բնակության հասցե

մյուս կողմից (այսուհետ՝ շահառու) կնքեցին սույն պայմանագիրը հեկայալի մասին. Կազմակերպությունը կազմակերպում է ծրագրավորման դասընթացներ **անվճար** հիմունքներով, որին ներգրավվում է շահառուին:

Շահառուի իրավունքներ են.

- ✓ Մասնակցել կազմակերպության կողմից կազմակերպվող ծրագրավորման ցանկացած դասընթացի բացառապես անվճար հիմունքներով
- ✓ Ստանալ իր գիտելիքների աստիճանը հավաստող վկայական
- ✓ Մասնակցել Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների մատուցմանը (կատարել պատվեր և այլ վճարովի աշխատանք)

Շահառուն պարտավոր է.

- ✓ Վճարել հոնորար Կազմակերպության կողմից ստացված գիտելիքներից որևէ մեկի իմացությամբ կամ պարտականություններով աշխատանքի ընդունվելու դեպքում՝ աշխատանքի ընդունվելուց հետո 8 ամսվա ընթացքում աշխատավարձի 4 տոկոսի չափով:
- ✓ Ինքնակամ դասընթացները լքելու դեպքում, դասընթացները լքելու օրվան հաջորդող 12 ամսյա ժամանակահատվածում Կազմակերպության կողմից ստացված գիտելիքներից որևէ մեկի իմացությամբ կամ

պարտականություններով աշխատանքի ընդունվելու դեպքում՝ աշխատանքի ընդունվելուց հետո 12 ամսվա ընթացքում աշխատավարձի 4 տոկոսի չափով:

- ✓ Մասնակցել դասընթացներին, չբացակայել դրանցից:
- ✓ Դասընթացները ինքնակամ լքելու դեպքում առնվազն 3 օր առաջ տեղյակ պահել Կազմակերպությանը:

Կազմակերությունը իրավունք ունի.

- ✓ Շահառուի անունից բացել ծրագրավորման աշխատանքների հարթակների հաշիվներ (account), տնօրինել դրանք և կառավարել շահառուի մասնակցությամբ՝ մինչև հոնորարի վճարման ժամկետի ավարտը:
- ✓ Անցկացնել քննություններ, ստուգել շահառուի գիտելիքները, ուղղորդել նրան, այլ հմտությունների ձեռքբերմանը:
- ✓ Ներկայացնել շահառուին աշխատանքի շուկայում՝ որպես թիմի անդամ:
- ✓ Շահառուի անհարկի բացակայությունների և ոչ բավարար արդյունքների դեպքում միակողմանի խզել պայմանագիրը

Կազմակերպությունը պարտավոր է.

- ✓ Ապահովել շահառուի ուսուցումը, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառուները նրա որպես մասնագետի պատրաստման համար:
- ✓ Փնտրել աշխատանքի հնարավորություններ շահառուի ունակություններին համապատասխան:

---------- <> ----------

Շահառուի կողմից հոնորարի վճարումից խուսափելու կամ այդ նպատակով աշխատանքի ընդունվելու վերաբերյալ փաստը թաքցնելու դեպքում, վերոնշյալ փաստը հայտնի դառնալուց հետո Կազմակերպությունը կարող է դիմել դատարան և պահանջել տուգանք 100.000 դրամի չափով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՐԱ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է ՀԱՇԻՎՆԵՐ ԲԱՑԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

*** Անհրաժեշտության դեպքում կազմակերպության նախաձեռնությամբ ի օգուտ շահառուի աշխատանք գտնելու կարող են այլ հաշիվներ բացվել նաև այլ հարթակներում**

ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄ ՀԱՆԴԻԱՑՈՂ ԱՆՁԻՔ